

# **«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ**

**Հոդված 1.** «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության 2018 թվականի մարտի 21-ի ՀՕ-180-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասում «կառավարության անդամը» բառից հետո լրացնել հետևյալ բառերը «, ինչպես նաև Կառավարությանը և վարչապետին ենթակա մարմինները»:

**Հոդված 2.** Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասում «կառավարության անդամը» բառից հետո լրացնել հետևյալ բառերը «, ինչպես նաև Կառավարությանը և վարչապետին ենթակա մարմինները»:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: